ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ ԵՐՋԱՆԻԿԻ

# ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՊԱՏՎԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԻՄԱԳԻՐ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ԻԵ.00.01 «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

---

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АКОПЯН АЙК ЕРДЖАНИКОВИЧ

# ОСОБЕННОСТИ ЗАКАЗА ЛИТУРГИИ В ЭПИГРАФИЧЕСКИХ И БИБЛИОГРАФИЧЕСКИХ ИСТОЧНИКАХ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 “Теория и история религии (религиоведение)”

ЕРЕВАН- 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Ա. Սարգսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Ավետիսյան,
պատմական գիտությունների թեկնածու Գ. Գ. Սարգսյան,

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. հուլիսի 7-ին, ժամը 14:00-ին ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի 068 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ ք. Երևան 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2014թ. հունիսի 7-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու դոցենտ Ա. Յու. Բալյան

---

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор исторических наук, профессор Л. А.Саргсян

Официальные оппоненты: доктор исторических наук А. Г. Аветисян
кандидат исторических наук Г. Г. Саргсян

Ведущая организация Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна

Защита состоится 7-го июля 2014 г. в 14.00 часов на заседании специализированного совета 068 в Ереванском государственном университете (адрес: Ереван 0025, ул. Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус, актовой зал).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 7-го июня 2014г.

Ученый секретарь специализированного совета кандитат исторических наук, доцент А. Ю. Балян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայագիտությունը, եկեղեցաբանությունը և միջնադարագիտությունը բազմազան հին ու նոր աղբյուրների հիման վրա, արդիական տեխնոլոգիաների և մեթոդների կիրարկմամբ, ահռելի նյութ ու գիտելիքներ են կուտակել ի սպաս պատմագիտության և առհասարակ հումանիտար գիտությունների զարգացման: Այդուհանդերձ հնից մնացել և ի նորո հարուցվել են այնպիսի կարևոր խնդիրներ, որոնց լուծման համար գիտության մեջ խստորեն զգացվել է պատմասոցիալական համատեքստի վերականգնման մեթոդի անհրաժեշտությունը: Իսկ նման համատեքստի ամբողջականացումը պահանջում է հետազոտության մեջ ներգրավել խնդրին առնչվող աղբյուրները, տվյալ դեպքում վիմագրերը, ձեռագրերը, ազգագրական ու բանագիտական աղբյուրները: Չափազանց հետաքրքիր կրոնական-դավանաբանական, սոցիալ-տնտեսական, եկեղեցագիտական երևույթ է պատարագ պատվիրելը, իր առանձնահատկություններով, որի ուսումնասիրությունը, սակայն, մեզանում նոր է սկսվում, չնայած այն բանին, որ այն եվրոպական միջնադարագետների ակտիվ ուշադրության կենտրոնում էր գտնվում դեռևս անցյալ դարում:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտության գիտական նորույթը պայմանավորված է ոչ միայն եկեղեցաբանության, ավելի կոնկրետ՝ հայ եկեղեցու պատմության խնդիրների լուսաբանման մեջ վիմագրիր, ձեռագիր, ազգագրական ու բանագիտական աղբյուրների ներգրառմամբ, այլև այդ իսկ աղբյուրների տիպաբանական մշակման, գիտական գնահատման և օգտագործման նոր մեթոդի առաջարկով: Ըստ այդ մեթոդի՝ անցյալի պատմասոցիալական համատեքստը հարստացվում է մի կարևոր բաղադրիչով, որ կոչվում է վանական տնտեսություն: Իսկ վանական տնտեսությունը, որը կազմվել է հավատացյալ հայորդիների նվիրատվություններով, արդյունք է եկեղեցու դավանաբանության ու նվիրատուների՝ դրախտին արժանանալու ցանկությամբ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնում: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած հինգ հոդվածներում:

## ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայել մատենագրական վկայությունները (Փավստոս Բուզանդ, Ստեփանոս Օրբելյան, Ներսես Շնորհալի, Հովհաննես Պլուզ Երզնկացի, Զաքարիա Քանաքեռցի և այլն): Թեմայի համար սկզբնաղբյուրային նշանակություն են ունեն նաև ուսումնասիրության մեջ օգտագործված Դիվան Հայ վիմագրության I-IX պրակները, նորահայտ երկու վիմագիր արձանագրություն Ուրցաձոր գյուղից, Մ.Մ. Մատենադարանի մի շարք ձեռագրեր: Հետազոտության ընթացքում օգտվել ենք նաև պարբերական մամուլից, որոնց էջերում առկա են բազմաթիվ արժեքավոր փաստեր՝ կապված մեր կողմից քննարկվող խնդրի հետ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ իրենց ենթագլուխներով, եզրակացություններից և հավելվածից:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնեական համաշխարհային ուսմունքն իր երկհազարամյա պատմության ընթացքում տարբեր տարածաժամանակային սահմաններում միշտ գոյատևել է տարբերակներով: Այդ համընդհանուր վարդապետության տարբերայնացումը տեղի էր ունենում երկու մակարդակում.

ա/ վարդապետական-պաշտոնական, որի դեպքում ստեղծվում էին տեղական, ազգային կամ տարածաշրջանային եկեղեցիներ և դրա պատճառով ծայր էին առնում դավանաբանական երկարատև բանավեճեր:

բ/ ժողովրդական:

Մեր կողմից ուսումնասիրվելիք խնդիրը, որպես այդպիսին, վարդապետական-պաշտոնական տարբերակի ուղիղ շարունակությունն է, քանի որ պատարագի պատվիրումը նպատակ է ունեցել քավել նվիրատուի և նրա ցանկությամբ նաև կենդանի կամ հանգուցյալ հարազատների մեղքերն ու ապահովել դրանց թողությունը: Մեղքերից ազատվելը միշտ եղել է քրիստոնյա մարդու, հատկապես միջնադարում ապրողի կյանքի գլխավոր նպատակներից մեկը: Ցանկացած քրիստոնյա, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, ակնկալում է ունենալ հետմահու կյանք և որպես դրա տրամաբանական շարունակություն՝ արժանանալ դրախտային կյանքի: Ուսումնասիրությանը առնչվող աղբյուրների ճնշող մեծամասնությունը 11-15 դդ դարերին են պատկանում, որը, ըստ էության, պայմանավորված է հիմնականում, տվյալ ժամանակաշրջանում մարդկանց անմխիթար վիճակով, անորոշ ապագայով, Նեռի ուրվականի ու Տիրոջ ահեղ դատաստանի տեսլականով: Նվիրատուները երազում էին իրենց ու իրենց հարազատների հոգու փրկության մասին, ուստի այդ է պատճառը,

որ նշված շրջանում հատկապես շատանում են նվիրատվական բնույթի արձանագրությունները, մասնավորապես Սանահինի, Հաղբատի, Կեչառիսի, Հովհաննավանքի, Նորավանքի, Գանձասարի, Հոռոմոսի և այլ վանական համալիրներում:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
## ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՊԱՏԱՐԱԳՆԵՐԸ՝ ԸՍՏ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

### 1.1. ՊԱՏԱՐԱԳՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՅՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պատարագը՝ որպես ծես, ունի մեղսաքավիչ գործառույթ: Այդ է պատճառը, որ այն դիտարկվել է որպես օղակ դրախտ հասնելու ճանապարհին: Բնական է, որ հոգու անմահության գաղափարը բնորոշ է հայերին, և առհասարակ մյուս ազգերին ևս նաև մինչքրիստոնեական շրջանում: Ուստի՝ պատարագ պատվիրելը կապված է եղել նաև նախաքրիստոնեական հավատալիքների ու պաշտամունքի հետ, որն ապացուցվում է ազգագրական ու բանագիտական սկզբնաղբյուրներով: Այսպես՝ կարելի է պնդել, որ պատարագ պատվիրելու ու նախնիների պաշտամունքի միջև կա անմիջական կապ: Հայտնի է, որ նախնիների պաշտամունքը կրոնի հնագույն և ամենից տարածված ձևերից մեկն է, որի հետ կապված են բազմաթիվ ծիսակատարություններ և հավատալիքներ: Այդ պաշտամունքը հանդիսավոր ու նվիրական բնույթ է ունեցել մանավանդ հայրիշխանական տոհմի, ապա ընտանիքի առաջացումից հետո: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ որ տոհմի կամ ընտանիքի հայրը, ղեկավարը մեռնելուց հետո էլ շարունակում է աներևույթ կերպով ապրել յուրայինների շրջանում, մասնակցել տվյալ տոհմի կամ ընտանիքի գործերին: Նախնիները պաշտպանում են յուրայիններին, եթե միայն սերունդը հոգատար է, ապահովում է նրանց կարիքները, ասես նրանք կենդանի լինեն, «պատարագներ» է մատուցում և պաշտում (հոգեհաց կամ մեռելոց): Այսպիսով՝ նախնիների պաշտամունքը մի հաստատուն կապ է նախորդ և հաջորդ սերունդների միջև: «Անցելոց» համար անհրաժեշտ է, որ նրանց սերունդը չսպառվի, նրանց «օջախը», «ճրագը», որի մոտ է հանգչում նրանց հոգին, չմարի, այսինքն՝ անպայման ժառանգ-հետնորդ ունենան: Ժառանգ-հիշատակ թողնելու համար եկեղեցում կատարում էին նաև վերանորոգչական աշխատանքներ էին, կառուցում էին այլ բնույթի շինություններ: Բարեխոսություն էին խնդրում Աստծուց նաև աշխարհիկ շինությունների (բերդ, աշտարակ) կառուցելու համար:

Քննարկվող շարժառիթով եկեղեցուն բացի շարժական գույքից նվիրվել է նաև անշարժ գույք:

Բացի անշարժ ու շարժական գույքի նվիրատվություններից՝ եկեղեցական ու քաղաքացիական տարատեսակ շինությունների կառուցումներից և վերանորոգումներից, հավատացյալները իրենց հիշատակն անմահացնելու համար կանգնեցնում էին նաև խաչքարեր: Այդպես են վարվել մասնավորապես Բազումշահի որդի Տաշուրակն ու իր կին Թամթոն:

Միջնադարյան Հայաստանում գոյություն է ունեցել նաև լայն տարածված մի սովորություն, որը զգալի չափով խթանել է գրչության զարգացումը. այն մարդը, որ երեխա չի ունեցել իր բարոյական պարտքն է համարել հիշատակ թողնել մի ձեռագիր, որը համարվել է տվյալ ընտանիքի «որդեգիրը», նրա ժառանգորդը:

Նվիրատվությունների կատարումը և որպես փոխատուցում պատարագ ստանալը պայմանավորված են եղել հասարակության լայն խավերի անմխիթար վիճակով, անորոշ ապագայով, ահեղ դատաստանով, որը հավատացյալներին մղում էր բարեգործության, հոգևոր եղբայրների հետ միաբանության, հաղորդակից լինելու պատարագների արարողություններին: Նվիրատուները երազում էին իրենց և հարազատների հոգու փրկության մասին, գաղափար, որը դարձավ համաքրիստոնեական եկեղեցու հիմնական ու տիրապետող աշխարհայացքներից մեկը: Այդ է պատճառը, որ հայկական վիմագրերում զգալի մաս են կազմում նվիրատվական բնույթի արձանագրությունները: Նվիրատվական արձանագրությունները սովորաբար ներկայացնում են որևէ անձի կողմից արված որևէ նվիրատվություն (անշարժ և շարժական գույք)՝ փոխարենը եկեղեցական տոնին նվիրառուից (հոգևորական, սպասավոր, միաբան) ստանալով ժամ կամ պատարագ: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ նվիրատուն և նվիրառուն երկուստեք պայմանավորվում էին, թե եկեղեցական որ տոների ժամանակ էին մերձավորների կամ հանգուցյալ մարդկանց հիշատակի պատարագները մատուցվելու: Նվիրատվությունների դիմաց ստացվող պատարագներն այդ շրջանում շատ են եղել, և դա այն դեպքում, որ հայոց եկեղեցու օրենքով միևնույն օրը միևնույն սեղանի վրա միայն մի պատարագ կարելի էր մատուցել: Նվիրատվությունների արդյունքում հոգևոր հաստատությունները ձեռք էին բերում հսկայական կալվածքներ, որոնցից ստացված հասույթը տրամադրվում էր հոգևոր օջախներին կից կազմակերպված հաստատություններին, ուրկանոցներին, անկելանոցներին, գողետներին, անտարակույս նաև, դպրության օջախներին:

## 1.2. ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Պատարագների փոխհատուցման խնդրի լուսաբանումը մեծ կարևորություն է ներկայացնում միջնադարի տնտեսության, տարատեսակ ապրանքների, շարժական ու անշարժ գույքի գների հստակեցման համատեքստում: Պատարագ ստանալու համար նվիրատուները կատարում էին բազմաթիվ նվիրատվություններ (անշարժ և շարժական գույք), կառուցում եկեղեցիներ և այլն: Սակայն հաճախ են եղել նաև դեպքերը, որ նվիրատուն ուղղակի նվիրել է որոշակի քանակությամբ գումար՝ դրա դիմաց ստանալով որոշակի քանակությամբ պատարագ: Հաճախ նվիրատվությունը եղել է և՛ դրամական, և՛ գույքային: Հաճախ պատարագ ստանալու երևույթը ուղղակի անվանվում է «պատարագ առնել»:

Պատարագ գնելու երևույթը կանոնակարգված է եղել յուրաքանչյուր վանքում հավանաբար յուրովի՝ կախված տվյալ վանքի վանահոր ու միաբանների ցանկությունից: Այդ եզրահանգմանը կարելի է գալ, որոշ նվիրագրերի ոչ երկիմաստ բնագրերից: Մենք կարող ենք նվիրաբերված գումարի ու պատարագի թվի բաժանումով իմանալ, թե ինչ է արժեցել մեկ պատարագը, իսկ մեկ պատարագի գինը ճշգրտման շնորհիվ արդեն հստակ կլինի տարատեսակ արձանագրությունների մեջ այգիների, ջրաղացների, ավետարանների, եկեղեցական սպասքի, շուրջառների, նվիրաբերած կենդանիների և այլնի արժեքի ճշգրտումը: Ցավոք սրտի, քիչ են մեզ հայտնի այն արձանագրությունները, որոնցում նշված է միայն որոշակի գումարաչափ, որի դիմաց նվիրատուն ստացել է որևէ քանակի պատարագաժամեր: Առաջին անգամ այս խնդրին անդրադարձել է Թադ. Ավդալբեգյանը իր «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրության մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար» հոդվածում: Իր այդ հոդվածում նա հիմնավոր կերպով բացատրում ու բացահայտում է պատարագ պատվիրելու համար անհրաժեշտ գումարը, որն է՝ 20-ից մինչև 25 դահեկանը՝ իհարկե այդ արժեքը ստանալով թվաբանական միջին հանելով: Հարկ է, սակայն, հաշվի առնել, որ Թադ. Ավդալբեգյանի ժամանակ հայտնի վիմագրերի թիվը անհամեմատ ավելի քիչ էր, քան ներկայումս: Բացի այդ՝ իր այդ ուսումնասիրության մեջ նա անտեսել էր մատենագիր սկզբնաղբյուրները, այն է՝ հիշատակարանները: Ինչպես նշում է Ավդալբեգյանը, պատարագների գնի հստակեցումը հնարավորություն կտա, որ կազմվեն կայքերի ու այլ ապրանքների գների տախտակներ: Ըստ գիտնականի, չկա պատարագի սակագին, որը չունենա շեղումներ, և ինչպես ցույց է տալիս նրա ուսումնասիրության երկրորդ տախտակը, այդ շեղումները տատանվում են 5–ից մինչև 75 դահեկան: Հիմնվելով մեծանուն գիտնականի հաշվարկների վրա՝ կարելի է եզրակացնել, որ նրա հաշվարկած

պատարագի միջին գինն այժմ հավասար կլիներ 9900 դրամից մինչև 50000 դրամ: Այսօր էլ հավատացյալները հոգեհանգստի պաշտոնի կամ պատարագ ստանալու համար կամավոր վճարում են հոգևորականին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ս. Մարինե եկեղեցում թողած Խեչանի նվիրագիրը, որը մեզ հայտնի պատարագ պատվիրելու ամենաուշ վիմագիրն է, 1847 թվականի է. նվիրատուն 25 թուման է նվիրաբերում՝ ստանալով մեկ պատարագ:

## 1.3. ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՊԱՏՎԻՐՄԱՆ ԱԶԱՆՁՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ժամանակի ընթացքում և՛ կենդանի մարդկանց, և՛ հանգուցյալների համար պատարագ պատվիրելու սովորույթը ձևափոխվեց: Պատարագ սկսեցին մատուցել միայն հանգուցյալների համար ու այն էլ հիմնականում հենց թաղման ծեսի ժամանակ: Այն իհարկե ազդեց նաև լեզվամտածողության վրա: Իզուր չէ, որ «ժամ» կամ «պատարագ անել» բառերը ստացան հետևյալ իմաստը. 1. (եկեղ.) Ժամասացություն կատարել, պատարագ մատուցել; 2 ՆՆջեցյալի հիշատակին հոգու հաց տալ; 3 Ուտելու համար մաս-մաս բաժանել : Իսկ հոգու պատարագ արտահայտությունը ձեռք բերեց «Հոգու հաց» իմաստը: Հիմնականում հանգուցյալների հիշատակի համար պատարագներ մատուցում էին Հայաստանի գրեթե բոլոր մասերում, սակայն կան բացառություններ: Այսպես Համշենում մեռելի համար պատարագ չէին անում: Ամեն մի տարածաշրջան ուներ հանգուցյալի համար տրվելիք պատարագի հարցում իր առանձնահատկությունը: Այսպես Գողթան գավառում եթե փոքրահասակ էր ննջեցյալը, անմիջապէս կատարում էին թաղման կարգը և տանում գերեզմանատուն, իսկ եթե չափահաս էր, սկսում էին պատարագ անել: Գրեթե միանման սովորույթ կար նաև Բորչալուի գավառում, ուր չափահասների համար սովորաբար պատարագ էին մատուցում, իսկ անչափահասներին և մանավանդ աղքատներին առանց պատարագ մատուցելու էին թաղում: Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս տարածաշրջաններին, ապա օրինակ Նախիջևանում, ինչպես գրում է հեղինակը. «... Ուննոր մարդիկ սովորութիւն ունին տարին մի անգամ պատարագ անել տալու իւրեանց մեռելներու հո՛ուն ...: Հանգուցյալի համար պատարագ պատվիրելու վերաբերյալ առատ նյութ կա նաև բանագիտության մեջ, մասնավորապես մեր բազմադարյա էպոս «Սասնա Ծռեր»-ում: Էպոսում պահպանված պատարագ տալու մասին վկայությունները շատ արժեքավոր են, և հավելյալ լույս են սփռում ուսումնասիրվող նյութի վրա:

## 1.4. ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՊԱՏՎԻՐՄԱՆ ԱԶԱՆԶՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ինչպես նշեցինք վերը, նվիրատու-հավատացյալները պատարագ ստանալու ակնկալիքով նվիրում էին նաև ձեռագրեր: Անշուշտ, ձեռագիր նվիրելու վերաբերյալ հիշատակությունների հանդիպում ենք վիմագրերում, բայց առավել հաճախ այդ հիշատակությունները կարելի է տեսել ձեռագրերի հիշատակարաններում: Իհարկե հիշատակարաններում նույնպես, ինչպես արձանագրություններում նվիրատուները հաճախ նշում են, որ նվիրել են ձեռագիր, առավել հաճախ Ավետարաններ, Մաշտոցներ, Շարակնոցներ, Հայսմավուրքներ ու ստացել որոշակի քանակի պատարագները: Ինչպես օրինակ ներքոգրյալ Ավետարանի հիշատակարանում. «… ի թուիս ՉԼԶ. 1287 թ., ի տաւն վարդավառին եկին ի յուխտ ի Սուրբ Լուսաւորչիս … Մեծտիկին … եւ որդին նորին Ապուլքարամ … եւ տուին զգեղեցկազարդ Աւետարանս ընծայք … եւ … միաբանքս տուաք ի տարին աւր մի պատարագ … ի տաւնի սուրբ քառասնիցն …»: Ինչպես կարելի է նկատել պատարագը պատվիրված է Վարդավառի կամ Տիրոջ Պայծառակերպության տոնին, որի ժամանակ պատարագի պատվիրումը հատկապես մեծ մասսայականություն էր վայելում, ինչը ապացուցվում է բազմաթիվ հիշատակարանների վկայություններով: Ցավոք սրտի, հիշատակարաններում նույնպես պատարագ պատվիրող նվիրատուները, ինչպես վիմագրերում, կոնկրետ գումար չեն սահմանել, որպեսզի այդ գումարի ու պատվիրված պատարագի թվի բաժանմամբ հնարավոր լիներ որոշել մեկ պատարագի գինը:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# «ԱՇԽԱՐՀԻԿ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԸՍՏ ՎԻՄԱԳԻՐ ՈՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

## 2.1. ՄԻԱԲԱՆՎՈՂ-ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՈՆՏԵՐ ԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Վիմագիր ու մատենագիր (հիմնականում հիշատակարաններ) աղբյուրներում շատ անգամ ենք հանդիպում «միաբանել», «միայբանել», «միաբանեցայ», «միաբան եղա» արտահայտությունների: Դրանք մեծ մասամբ նվիրատվական բնույթի հիշատակագրություններ են: Հաճախ նվիրատուները իրենց նվերների դիմաց ստանում էին պատարագ (դրամ, կայք՝ անշարժ ու շարժական գույք, ձեռագիր և այլն): Նմանատիպ բազմաթիվ արձանագրություններ ու հիշատակարաններ կան, որտեղ նվիրատուն բանաձևված կերպով գրում է, որ «միաբանեցավ» ինչ-որ վանքի և ստացավ պատարագ: Սակայն կան նաև այնպիսի նվիրատվական

վկայագրեր, որտեղ վանքին տրվում է ինչ-որ ընծա, ու նվիրատուն ստանում է պատարագ, բայց «միաբանել» կամ «միաբանեցայ» արտահայտությունը չկա: «Միաբանել» բառը «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում բացատրվում է հետևյալ կերպ. «Միաբանիմ. միաբան լինել. միաձայնիլ. ձայնակից լինել. հաղորդ և հաւան գտանիլ. միանալ. յարմարիլ, միաբան և եղբայր գրիլ վանաց, տալով ինչ հոգեբաժին»: Հետաքրքրական է հատկապես «միաբան և եղբայր գրիլ վանաց, տալով ինչ հոգեբաժին» բառակապակցությունը: Մինչ այժմ հայտնի է, որ Հայ առաքելական եկեղեցին իր պատմության ընթացքում պաշտոնապես չի ունեցել աշխարհիկ միաբանների ինստիտուտը: Այն ավելի շատ բնորոշ էր կաթոլիկ եկեղեցուն, երբ աշխարհիկ անձը, որևէ վանքի միաբան չլինելով, համարվում էր հոգևորական՝ վանքից ցանկացած պահի հեռանալու իրավունքով: Ինչպես «Բառգիրք Հայկազեան լեզուի», այնպես էլ Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում», իր 3-րդ իմաստով «միաբանել» նշանակում է «3.(Կրօն.) Վանքի միաբան դառնալ: Նա մեր վանքին միաբանեցաւ և բոլոր ունեցածը վանքին նուիրեց»: Ինչպես գիտենք, հռոմեակաթոլիկ եկեղեցին ունեցել է աշխարհիկ միաբաններ ունենալու սովորույթը: Այդ մասին մենք իմանում ենք Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» աշխատությունից: Անդրադառնալով Լևոն Գ թագավորի որդի՝ ապագա Հեթում Բ թագավորին՝ նա գրում է. «Հեթում թագաժառանգ արքայորդին կանուխէն ինքզինքը բարեպաշտական կենցաղի նուիրած էր, առաջնորդութեամբ Լատին կրօնաւորաց, որոնք հաստատուած ու տարածուած էին Կիլիկիոյ մէջ... »: Սակայն, ինչպես հայտնի է, կաթոլիկների մոտ վանական միաբանության անդամները իրավունք չունեն վանքի տարածքից իրենց հայեցողությամբ դուրս գալու: Բայց Հեթում Բ-ի պարագայում, բնականաբար, այդ կանոնը խախտվում էր, քանի որ նա իրականացնում էր արքայի պարտականությունները, և, իհարկե, դա չէր կարող անել՝ վանքի պարիսպներից ներս գտնվելով: Ուստի, կրկին դիմում ենք Մաղաքիա Օրմանյանի փաստարկմանը, որն ավելի հավանական ու արժանահավատ է. «Կամ ինքն (*Հեթում Բ-ն – Հ.Հ.*) Երրորդական կոչուած դասակարգին կը պատկանէր, որով վանական կենցաղէ ու սքեմէ ազատ էր, եւ կամ միաբանութեան վարչութիւնն ու պապութիւնը իրեն համար բացառութիւն ըրած էին, որպէսզի անոր ձեռքով աւելի դիւրալ կարենան հայերու մէջ սողոսկիլ, եւ զանոնք հռոմէադաւանութեան եւ լատինականութեան վաստկիլ»: «Երրորդական» կոչված դասակարգը, որի մասին հիշատակում է հեղինակը, ըստ էության, միաբանի այն տարատեսակն էր, որը և՛ միաբան էր, այսինքն եղբայր էր տվյալ վանքի վանականներին, և՛ վանքից դուրս ապրելու իրավունք ուներ: Կարելի է ենթադրել, որ այդ մարդիկ սովորաբար բարձր խավի ներկայացուցիչներ էին, և հավանական է նաև՝ բարերարներ: Սակայն

կաթոլիկ եկեղեցու «երրորդական» դասակարգի ներկայացուցիչներից Հեթում Բ-ն ամուսնացած չէր ու կուսակրոն էր, իսկ հայ առաքելականների շրջանում, բնականաբար, ամեն ինչ չէ, որ նման էր կաթոլիկներին, քանի որ նվիրատու-միաբանյալների թվում բազմաթիվ էին ամուսնացածները: Այսպես՝ Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի մեջ կա քննարկվող խնդրին առնչվող շատ կարևոր մի տեղեկություն, որտեղ խոսվում է Կիլիկիայի թագավոր Լևոն Գ-ի՝ Տաթևի վանքին միաբանելու մասին, այնինչ՝ կասկածից վեր է, որ հայոց թագավորը ամուսանացած է եղել. կինը Կեռան թագուհին էր: Սյունյաց պատմիչը գրում է. «Եւ նորա (Լևոն Գ-ի՝ *Հ.Հ.*) ի վաղ ժամանակաց ցանկացող եղեալ միաբանութեան սուրբ և գերափառ ուխտին Տաթևոյ...»: Ապա մեջբերում է հայոց արքայի խոսքը, որում Լևոն Գ-ն ասում է. «Եւ խոստովանող ուղիղ հաւատոյ համագոյ սուրբ Երրորդութեան, Յայս Աստուածընկալ սուրբ ուխտ խնդրեցի լինել միաբան...»: Իհարկե, այդ ամենը միայն Տաթևի վանականների հետ եղբայրանալու կամ միաբանելու նպատակ չէ որ հետապնդում էր, ինչպես նկատել է Մաղաքիա Օրմանյանը:

Մատենագրական սկզբնաղբյուրներից մեկը, որը նույպես առնչվում է մեր խնդրին, Հովհաննես Պլուզ-Երզնկացու «Յաղագս միաբանութեան խրատք ...»-ի բնագրում «առկայ առանձին արտայայտութիւններ են, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել այդ եղբայրութեան, ինչպէս եւ եղբայրութեան մէջ մտնող տարբեր տարիքի ու տարասեռ մարդկանց գործունեութեան մասին: Բնագրից պարզ է դառնում, որ եղբայրութեան անդամներ են եղել երկսեռ երիտասարդներ, ծերեր ու մանուկներ: Հետեւաբար, կասկածից վեր է, որ եղբայրութեան անդամներ եղել են ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ անձեր ...»: Այս փաստը հաստատում են նաև հիշատակարանները, մասնավորապես Ավագ և Հառիճա վանքերում արտագրված հետևյալ ձեռագրերինը. «... նաեւ որք համաւրէն միաբանեալ են սրբոյ ուխտիս (իմա՝ Աւագ վանք՝ *Հ.Հ.*) ճգնաւորք եւ միանձունք, ծերք եւ երիտասարդք՝ հանդերձ դասու քահանայից», և «Հառիճ.Եւ գրեցաւ ի ՈԿԸ. (1219 թ.) թ[ուիս] Հայոց, ...[Ար]դ, աղ[ա]չեմ զամենեսեան յիշեցջիք ի սուրբ յաղաւթս ձեր ... և զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս և զկրաւն[աւ]որսս, և զծ[երսս] և զերիտասարդսս [յիշե]ցէք յա[ղաւթս ձ]եր: ...»: Ինչպես երևում է վերոնշյալ առաջին հիշատակարանից, վանքին միաբանվում են «ճգնաւորք եւ միանձունք, ծերք եւ երիտասարդք՝ հանդերձ դասու քահանայից», որից հստակ երևում է, որ միաբանների թվում են նաև աշխարհիկ անձինք, իսկ երկրորդ հիշատակարանում աղաչում են հավատացյալներին իրենց աղոթքում հիշել վանքի միաբաններին՝ «զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս և զկրաւն[աւ]որսս, և զծ[երսս] և զերիտասարդսս»: Այս հիշատակարանում նույնպես, որպես միաբան եղբայրներ, նշվում են լիովին աշխարհիկ

մարդիկ: Հետաքրքրական է նաև այս հիշատակությունը. «Նազ՝ ծառայ Աստուծոյ, դուստր Մխիթարա և Շնֆոր տիկնա, գրեաց զինքն միաբան Սուրբ Նշանին, որ յամենայն տարի գայ առաջի Սուրբ Նշանին և բերէ զիւր ընծայն ոչխար …: Ի թվ. ՉԽԴ. (1295 թ.)»: Այս արձանագրությունից կարելի է ենթադրել, որ վանքին ընծա տալուց առաջ պետք էր միաբան գրվել, որպեսզի տեղի հոգևորականությունը թույլ տար դառնալու վանքի նվիրատուն: Հավանաբար, Թորոս խապազը նույնպես միաբան դառնալուց հետո էր թույլտվություն ստացել դառնալու վանքի նվիրատուն. «… Թորոս խապազն, որ եղև միաբան Սուրբ Աստուածամաւրն: Յամեն տարի Ո (600) մ[ոթ] հաց վանիցն պտղի է»:

Կան բազմաթիվ վիմագրեր, որտեղ նվիրատուները իրենց ուղղակի անվանում են միաբաններ, ինչպես օրինակ՝ 1291 թ. գրված հետևյալ արձանագրության մեջ. «… ԵՍ ԽՈՒՇ|ԻԹ, …, ՄԻԱՅԲԱՆ ՈՒԽՏԻ ՍՈՒՐԲ ՄԱ|ՄԱՍԱՅ, ԵՏՈՒ ԶԻՄ |ՀԱՅՐԵՆԻՔՍ … ՍԲ ՆԱՀԱՏԱԿԻՍ …»: Սակայն «միայբան» բառը այս արձանագրության մեջ միանշանակ հասկանալ չի կարելի: Նախ՝ Խուշիթ անձնանունը եկեղեցական չէ, հետևաբար՝ Խուշիթը եկեղեցական լինել չի կարող: Խուշիթի անձի ու կարգավիճակի հարցում մեկ այլ վիմագիր ճշգրտումներ է կատարում: Պարզ է դառնում, որ Խուշիթը գոնե այդ թվականին եղել է աշխարհիկ, քանի որ Խուշիթի մասին մեզ տեղեկատվություն տվող մեկ այլ արձանագրության մեջ խոսվում է նրա կնոջ՝ Քիմախաթունի մասին (երկու արձանագրություններն էլ 1291 թվականի են). «ԵՍ ԽՈՒՇԻԹ ՈՒՐԱՆՇԱՀԻՆ ՈՐԴԻ, Ա|ՊՆԻՆ, ԿԱՆԿՆԵՑԻ Զ|ԽԱՉՍ ԶԱՅՍ|ԻՆՁ ԵՒ ԵՂԲԱՒՐ|ԻՄՈՅ ԴԱՒԻԹ ՔԱՀԱՆԱՒ ԵՎ| ԱՄՈՒՍ[Ն]Ո ԻՄՈ ՔԻՄԱԽԱԹՈՒՆԻՆ…»: Ամենայն հավանականությամբ Խուշիթը եղել է.

ա. աշխարհիկ, ապա իրեն նվիրել կրոնավորության կամ վանական կյանքին:

բ. Խուշիթը եղել է աշխարհիկ, և որպեսզի իրեն թույլ տան դառնալ նվիրատու, նա ձևականորեն անդամագրվել է կամ միաբանվել եկեղեցուն:

գ. «միաբանել»-ը այստեղ զուտ նվիրատու լինելու նշանակություն ունի:

դ. չի բացառվում, որ Խուշիթը եղել է շուշտակ հոգևորական:

Որ վարկածն էլ լինի հավանական, միանշանակ է, որ «միաբանել» արտահայտությունը իր ենթատեքստում նվիրատվության հետ առնչակցվում է: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ «միաբանել» բառով նվիրագրերը հատկապես սկսում են հաճախակի դառնալ 13-15-րդ դարերում:

Ինչպես հայտնի է, այդ շրջանում լայնորեն սկսում է տարածում գտնել «պարոնտերության» երևույթը: Պատճառը հայ առևտրականների ու ազնվականների՝ եկեղեցու հովանավորությամբ օտար զավթիչներից իրենց ունեցվածքը փրկելու ցանկությունն էր: Հայ պետականության անկումից

հետո, եկեղեցին հոգևոր գործառույթից բացի, իր վրա էր վերցրել նաև հայ ժողովրդի ներքին գործերը տնօրինելու պարտականությունը: Հաշվի առնելով այն, որ եկեղեցու պաշտոնյաներն ու նրանց կալվածքներն ազատված էին մի շարք հարկերից ու տուրքերից՝ հայ իշխանական տների ներկայացուցիչները վանքերի իրավասության տակ էին դնում իրենց անձնական կալվածքները՝ դրանց վրա կարգելով մերձավորների: Վերջիններս կրում էին «պարոնտեր» կոչումը, այսինքն՝ և՛ պարոն էին (աշխարհիկ իշխան), և՛ տեր (հոգևոր առաջնորդ): Հատկապես XIV-XV դդ. «պարոնտիրական» բազմաթիվ համակարգեր են ստեղծվում Սյունիքում, Երզնկայում, Վասպուրականում, Արցախում և այլուր: Ըստ պրոֆեսոր Է. Բաղդասարյանի՝ հայ եկեղեցու և Կիլիկյան հայկական թագավորության վերաբերմունքը «պարոնտիրության» նկատմամբ ընկալվում է իբրև «յուրօրինակ դաշինք հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև և միջոց է՝ ստեղծված պայմաններում ինչ-որ չափով պահպանելու հայ ավատատիրության իրավունքները»: Աշխարհիկ ավատատերերը, չկարողանալով պահպանել իրենց տիրույթները, «... ընդունում էին հոգևոր աստիճան և տիրույթներն էլ ձևականորեն եկեղեցուն նվիրում: Մինչդեռ իրականում այդ տիրույթների հետ վարվում էին նախկին ավատատիրական իրավունքով»: Ամենայն հավանականությամբ այդ է պատճառը, որ «միաբանել» բառով արձանագրությունները հատկապես շատ են Սյունիքում, Արցախում, Լոռիում, Տավուշում, որտեղ պահպանվել էին վերոնշյալ դարերում իշխանական-մելիքական տոհմերն իրենց իշխանություններով: Արդյո՞ք մեծ թիվ կազմող «միաբանեալ» կանայք նույնպես եղել են պարոնտերեր կամ իշխանական կարգավիճակ ունեցել: Այս դիտարկմանը ի պատասխան՝ կարելի է բերել հետևյալ նվիրագիրը. «[ԱՆ]ՈՒԱՄԲ ԲԱՐԵՐԱՐԻՆ [ՊԱ]ՏՐՈՆ ԽԱ[ԹՈՒ]ՆՆ՝ ՀԱՐՄՆ ԳԱՐԲԱՆԵՑԵԱՑ, ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ ՎԱՉԷ ԵՒ ԾԻԹԼԱՒՍԱՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՀԱՂԲԱՏԱ ԵՒ ՆՈՒԻՐԵՑԻՆ ԸՆԾԱՅՍ ՍԲ ՆՇԱՆԻՍ...»: Այստեղ հստակ երևում է, որ Խոշաքը կին է, նրան դիմել են «պարոն» տիտղոսով, որով սովորաբար դիմում էին արական սեռի իշխանազուններին, և կնոջ՝ որպես իշխան հանդես գալու երևույթը այնքան էլ սակավադեպ չէր տվյալ դարաշրջանում: Մասնավորապես կարելի է հիշատակել աթաբեկ Իվանե Զաքարյանի տղա Ավագ Զաքարյանի դուստր՝ «պարոն» տիտղոսը կրող Խոշաքին:

Պարտադիր պայման չէ այն հանգամանքը, որ «միաբանել» բառն օգտագործողը լինի պարոնտեր, քանի որ շատ դեպքերում այն զուտ «նվիրատու» իմաստն է պարունակել, և միաբանվողները երբեմն եղել են միայն նվիրատուներ: Բայց, հաշվի առնելով բազմաթիվ նվիրատվական արձանագրությունները, որոնցում «միաբանել» բառը չի հանդիպում, որ միաբանվել կարող էին հիմնականում ազդեցիկ մարդիկ՝ իրենց ընտանիքի

անդամներով (մայր, կին, եղբայր և այլն), նվիրատվությունը ստացող վանքի հովանավորները, որոնք հաճախ այդ վանքի պարոնտերերն էին: Խնդրի հետ կապված Սանահինի վանքի վիմագրերից մեկում հանդիպում ենք հետևյալ կարևոր մի տեղեկության.

«Ի ԹՎԻՍ ՉԺԴ (1265): ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ԵՍ՝ ԱԲՐԱՀԱՄ, ՓՈՒԿՉԻՆ ՈՐԴԻՆ, ԱՄՈՒՍԻՆ ԼԻՄ ԱՐՁՈՅՆ ԵՒ ՄԵՐՈՐԴԻՆ՝ ՔԱՐԱՄՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ Ի Ս̅Բ̅ ԱԼՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ ԵՒ ՏՈՒԱՔ ԱՐԴԻՒՆՍ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ՍԻՄԵՒՈՆ ՇՈԹԼՈՌԿԱ ՈՐԴԻՆ, ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ ՄԵԶ Գ (3) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՒ ԽՈՐԵՆԱ…»:

Նման վավերագրերի շարքում տվյալ արձանագրությունը անսովոր է այն իմաստով, որ տրված նվերների դիմաց պատարագաժամերը սահմանում է ոչ թե վանահայրը կամ վարդապետը, այլ «Շոթոռկա որդի Սիմեւոնը», որը հոգևոր կոչում չունի, աշխարհիկ անձ է: Այս հանգամանքը Կ. Ղաֆադարյանը բացատրում է այն բանով, որ ազնվական ծագում ունեցող Շոթոռկա որդին «Սանահնում եղել է իշխանավոր», և վանահոր բացակայության դեպքում նրան իրավունք է վերապահվել վճիռներ կայացնելու միաբանների հետ: Այն, որ վանահոր տեղը վճիռներ է կայացրել աշխարհիկ անձը, մեծ տարածում է գտել հետագա դարերում, մասնավորապես՝ Կիլիկիայում ու Երուսաղեմում:

## 2.2 ՀԱՆԳՈՒՅՑԱԼԻ «ՄԻԱԲԱՆՎԵԼՈՒ» ՄԻ ՆՎԻՐԱԳԻՐ

Վիմագրերում նույնպես հաճախ ենք հանդիպում հանգուցյալների հիշատակի համար կատարված նվիրատվությունների: Ուստի օրինակների անհարկի կուտակումներից խուսափելու համար անցնենք բուն նյութի քննությանը: «Դիվան Հայ Վիմագրության» մատենաշարում մեր ուշադրությունն է գրավել Գանձասարի վանքից հայտնաբերված նի վիմագիր, որն է. «ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ԵՍ ԷՍՈՒԳԱՆՍ, ԴՈՒ/ՍՏՐ ՄԵԾԻՆ ԱՄԻՐ ՀԱՍԱՆԱ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ ԾԻԾԻՆ ԻՄՈՅ ՄԻ□ԱԲԱՆԷՑԻ ԶՆ/Ա ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ ԸՆԾԱ. ՏՐ ՅՈՀԱՆԷՍ ԵՒ ՄԻ/ԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ :Բ: ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՔԱՌԱՍՆԻՑՆ … ԹՎԻՆ: ՉԾԸ: (1309)»: Արձանագրության մեջ հարցեր է առաջացնում «ՄԱՀՈՒԱՆ ԾԻԾԻՆ ԻՄՈՅ ՄԻԱԲԱՆԷՑԻ ԶՆ/Ա ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԻ ԸՆԾԱ» արտահայտությունը: Դիվան 5 ում առկա գրչագրից ու լուսանկարից պարզ է դառնում, որ վիմագիրը վերծանված է անսխալ: Չի բացառվում, սակայն, ցանկացած արձանագրության վերծանության ժամանակ սխալ բառանջատումը: Վաստակաշատ գիտնական Ս. Բարխուդարյանը բառանջատումը կատարել է այնպես, ինչպես ներկայացրել ենք սույն վիմագրում: Այժմ առանձին-առանձին քննելով այդ երկու բառերը պարզ է դառնում որ «ԻՄՈՅ» բառը, բնականաբար, ունի «իմ» բառիմաստը, իսկ «ԾԻԾԻՆ»-ը նշանակում է «Ծիծ. ըր և Տիտ. և վր. ձուձու. բառ ռմկ: Ոսկիփոր: Տ. արին»: Իսկ «արին» բառը

նշանակում է՝ «արին, արինք, արեան, արեամբ, արմատն է Շիթ, կաթ, թ. սիւտ, լծ. և ծուծ, որ և տիտ»: Այս բառի բառիմաստներից պարզ է դառնում, որ «ԾԻԾԻՆ»-ը ունի «ստնտու, դայակ» նշանակությունը, ու այս արձանագրության եզակիությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ որպես ստնտու բառի հոմանիշ օգտագործվում է ծիծ բառը ու ամենայն հավնականությամբ տեղի է ունեցել հետևյալը. Ամիր Հասանի դուստր Էսուգանի դայակը մահվանից առաջ կտակել է, որ Գանձասարի վանքին նվերներ տան, որպեսզի այդ վանքում իր տիրուհու համար երկու պատարագ մատուցվի:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
## ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

### 3.1. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Ապաշխարել» նշանակում է լալ, ողբալ, կոծել, մի խոսքով՝ կատարած մեղքերի համար զղջալ և գործած չարիքի դիմաց սեփական անձը պատժել: Ապաշխարության խորհրդի ժամանակ հավատացյալը սրտի անկեղծ զղջումով խոստովանում է իր մեղքերը հոգևորականի առջև և նրա միջնորդությամբ անտեսանելիորեն թողություն ստանում մեղքերից անմիջապես Հիսուս Քրիստոսից: Ապաշխարության խորհրդով թողություն է տրվում մկրտությունից հետո գործած բոլոր մեղքերին՝ թե՛ ներելի, և թե՛ մահացու: Եվ մինչ մկրտության և դրոշմի խորհուրդներն անկրկնելի են, ապաշխարության խորհուրդը կատարվում է պարբերաբար՝ հավատացյալի ողջ կյանքի ընթացքում, քանի որ մարդն իր բնությամբ տկար է և մշտապես ենթակա մեղանչումի: Ապաշխարության խորհրդակատարն օծյալ հոգևորականն է: Ապաշխարության սկիզբը գործած մեղքն ընդունելն է: Ապաշխարել պետք է կենդանի ու անկեղծ հավատով, որովհետև միայն այդպիսի ապաշխարությունն է ընդունելի Աստծուն ու եկեղեցուն և այդպես կարելի է վերստին հաշտվել Աստծո հետ: Եվ եթե՝ «Մեղքի վարձքը մահն է (Հռոմ.Զ 23), ապա ապաշխարության պտուղը՝ փրկությունն ու հավիտենական կյանքը: Ապաշխարության կարգը կատարվում է հետևյալ կերպ՝ 1. Զղջում. իր մեղքը գիտակցող անձը պետք է սրտում անկեղծ զղջում ունենա կատարածի համար, ինչպես նաև վճիռ՝ այն այլևս չկրկնելու: 2. Խոստովանություն. երբ մարդ մկրտությունից հետո գործած մեղքերը խոստովանում է հոգևորականի առջև՝ արձակում (մեղքերի թողություն) ստանալու ակնկալիքով: Առաջին դարերի Եկեղեցում խոստովանությունը կատարվում էր հրապարակավ և հազվադեպ՝ առանձնական: 4-րդ դարում հրապարակավ իրենց մեղքերն

էին խոստովանում միայն մարդասպանները, կռապաշտները և պոռնիկները: Հետագայում 5-րդ դարի սկզբին, հրապարակային խոստովանությունը դուրս եկավ կիրառությունից: Խոստովանությունը համայնքի անդամների ներկայությամբ կատարվելու փոխարեն սկսվեց ծածուկ կատարվել քահանայի ու խոստովանողի միջև: Հայաստանյայց Եկեղեցին պահել է թե՛ հրապարակային, (ընդհանրական), թե՛ առանձնական խոստովանության ձևերը:
Առանց մեղքերից արձակում ստանալու ակնակալության խոստովանությունը թերի է: Խոստովանողի խղճմտանքը լավ քննելուց հետո քահանան խորհում է, թե նա ինչպիսի ապաշխարություն պիտի կրի, խրատում ու զգուշացնում է, որ այլևս չմեղանչի: Այնուհետև քահանան արձակում է նրան մեղքերից: 3. Վճարում. յուրաքանչյուր քրիստոնյա պետք է պատրաստ լինի իր կատարած մեղքի դիմաց որոշակի ապաշխարություն կրելու: Այսինքն՝ կամավոր հանձն առնել խոստովանահոր կողմից իրեն սահմանած պատիժը՝ նեղությունները կրելը: Մեղքը սիրո բացակայությունն է, զոհողությունը՝ սիրո երախտիքը: Հետևաբար, մեղքը զոհողությամբ պետք է ջնջենք, որպեսզի և՛ մեր խիղճը խաղաղվի, և՛ Աստծո ողորմության ակնկալիքն ունենանք: 4. Այսու, քահանան, լսելով հավատցյալի անկեղծ խոստովանությունը, իրավունք ունի մեր գործած մեղքերի համեմատ ապաշխարություն սահմանել մեզ համար, այն է՝ աղոթք, պահք, ողորմություն:

## 3.2. ՄԵՂՔԵՐԻ ԹՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԳՆՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Մեղքերից ազատվելը միշտ եղել է քրիստոնյա մարդու, հատկապես միջնադարում ապրողի կյանքի գլխավոր նպատակներից մեկը: Ցանկացած քրիստոնյա ակնկալում է ունենալ հետմահու կյանք, արժանանալ դրախտին: Հայ առաքելական եկեղեցին իր՝ մեղքերի սահմանման մեջ առանձնացնում է յոթ մահացու մեղքեր, որոնք են. հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ագահություն, որկրամոլություն, բղջախոհություն (պիղծ մտածմունքներ ու գործեր, վավաշոտություն): Վերը նշված մահացու մեղքերից են բխել մյուս բոլոր մեղքերը, որոնց թողության համար միջնադարում հաճախ վճարել են ոչ միայն հոգևոր զրկանքներով, այլ նաև դրամական, գույքային, այն է նյութապես: Մեղքերի թողությունը, որպես այդպիսին, եղել է Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից մեկի՝ ապաշխարության միջոցներով, բնական շարունակությունը, որն ուղեցվել է զղջմամբ ու խոստովանությամբ: Մեղքերի թողության, այն է՝ արձակման իրավունքը, բնականաբար, ուներ միայն եկեղեցին: Այդ իրավունքի առկայությունը հոգևորականները հիմնավորում էին Քրիստոսի

հետևյալ խոսքերով. «Ամէն ասե՛մ զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեա՛լ յերկինս եւ զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեա՛լ յերկինս» (Աւետարան ըստ Մատթէոսի, Գլուխ ԺԸ. 18), ինչպես նաև Աստվածաշնչի այս հատվածով. «Եւ զայս իբրեւ ասաց, փչեա՛ց ի նոսա՝ եւ ասէ. Առէ՛ք Հոգի Սուրբ. եթէ ում եք թողուցուք զմեղս, թողեա՛լ լիցի նոցա. եթէ զուրուք՝ ունիցիք, կալեա՛լ լիցի» (Աւետարան ըստ Յովհաննու, Գլուխ Ի 22-23): Արձակման դիմաց թողություն ստացողները անում էին որևէ նվիրատվություն (անշարժ և շարժական գույք) փոխարենը եկեղեցական տոնին նվիրառուից (հոգևորական, սպասավոր, միաբան) ստանալով ժամ կամ պատարագ: Այդ երևույթը նույնիսկ կանոնակարգված էր առանձին վանքերում, ինչը կարելի է հիմնավորել հետևյալ սկզբնաղբյուրով, որն Ավետարանի հիշատակարան է. «… աստուածապատիւ կարգաւ տէր Սիմոն … ստացաւ զսա անջնջելի արձան ի մխիթարութիւն անձին և յոյս փրկութեան: … ի թուականիս Հայոց ՉԾԴ. (1305 թ.), … Եւ արդ, ես՝ տէր Սարգիս, առաջնորդ սուրբ ուխտիս Վարագա միաբան եղբայրութեան դասուս, ըստ <u>կանոնական սահմանի</u> (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.), կարգեցաք հաստատուն հրամանաւ, որ յամէն տարի Նոր կիւրակէն Բ. (2) ժամ առնենք ստացողի սուրբ աւետարանիս …»: Այս հիշատակարանից հստակ երևում է, որ Վարագա վանքում եղել է կանոն, որով օրինակարգվել է նվիրատվությունների դիմաց պատարագների տրամադրումը, որի շրջանակներում էլ տեղի էր ունենում մեղքերի թողությունը կամ արձակումը: Նվիրատուին հուզել է իր հոգու փրկության ապահովումը, ուստի նա հոգացել է ժամ կամ պատարագ մատուցելու համար: Սա փաստորեն պայմանագիր է կնքված երկու կողմերի միջև, յուրաքանչյուրի պարտականության հիշատակմամբ և դրանց իրավաբանական հաստատմամբ: Իրավաբանական հաստատումն էլ, ըստ էության, հանդիսանում էին արձանագրություններն ու հիշատակարանները՝ որպես գրավոր վկայություն: Ինչպես վերը նշեցինք, նվիրատու-հավատացյալները ստանում էին պատարագ: Հայտնի է, որ ներկայումս պատարագներ պատվիրելու հնավանդ երևույթը վերացել է կամ ոչ համատարած կերպով պահպանվում է որոշ համայնքներում կամ էլ եզակի բնույթ է կրում Ներկայումս հավատացյալները թղթի վրա գրում են իրենց հին ու նոր հանգուցյալների անունները, ու պատարագիչը, պատարագի ավարտին կարդալով նրանց անունները, Աստծուց խնդրում է թողություն տալ այդ մարդկանց մեղքերին, ինչպես նաև աղոթում է բոլոր ապրողների բարօրության համար և հետո բարձր ձայնով օրհնում է ժողովրդին: Պատարագն է այն միակ միջոցը, որի ընթացքում կատարվում է խոստովանության կարգը, հավատացյալն ազատվում է մեղքերից ու որպես դրա հետևանք՝ հույս ունենում արժանանալու դրախտին:

Արդյո՞ք պատարագներ պատվիրելով իրենց նվիրատվությունների դիմաց, նվիրատու-հավատացյալի անվանը զուգահեռ կարդացվել են նաև այլ հավատացյալների անուններ՝ խնդրելով նրանց մեղքերի թողությունը ևս, թե միայն նվիրատուի: Այդ հարցին պատասխանելու համար հարկ է անդրադառնալ որոշ վիմագրերի: Այսպես՝ Դիվան հայ վիմագրության IX-րդ՝ Լոռվա պրակում, N 14 վիմագիրը մեղքերի թողության խնդրագիր է նաև: Այդ նվիրագրից պարզ է դառնում, որ պատարագ է մատուցվել միայն Գրիգորի ու Մատթեոսի համար, վերջինիս դեպքում՝ իր մահից հետո: Բնականաբար, որևէ այլ հավատացյալ այդ մատուցվող պատարագի ժամանակ չէր հիշատակվում ու մեղքերի թողություն չէր ստանում: Շատ հստակ է նաև այն հանգամանքը, որը Գրիգորին տրվելիք պատարագը կատարվել է նրա կենդանության օրոք, և ոչ թե հետմահու: Հետևաբար՝ պատարագ պատվիրելը եղել է միջոց նաև կենդանության ժամանակ մեղքերը քավելու: Համաձայն եկեղեցու վարդապետության՝ հանգուցյալները չեն կարող հետմահու կյանքում քավել իրենց մեղքերը: Նրանք, ըստ արժանվույն, գտնվում են կամ հավիտենական երանության, կամ էլ հավիտենական տանջանքների մեջ: Հետևաբար զղջալ չեն կարող, քանի որ երանության ու տանջանքի հոգեվիճակը կլանում է մարդու ողջ ուշադրությունը: Ըստ աստվածաբանների՝ այդ է պատճառը, որը հանգուցյալները նունիսկ չեն հիշում իրենց երկրային կյանքը: Հանդերձյալ աշխարհում գտնվողների համար ապրողները միայն կարող են աղոթել՝ դրանով իսկ թեթևացնելով նրանց վիճակը: Դրանով է բացատրվում բազմաթիվ այն արձանագրությունների առկայությունը, որոնցում մարդիկ, իրենց կենդանության օրոք, նվիրատվություններով փորձում քավել իրենց, ինչպես նաև իրենց հանգուցյալների մեղքերը: Ուստի, կենդանի մարդկանց համար տրվող պատարագները ուղղափառ էին ու չէին հակասում եկեղեցու վարդապետությանը: Ուշագրավ է Քոբայրի վանքի հետևյալ արձանագրությունը, որը վրացերեն է՝ թարգմանված հայտնի հայագետ-վրացագետ Պարույր Մուրադյանի կողմից. «Թ[ւին] ՈԼԵ. ( = 1186): Ես Խաչգու[ն]դս՝ / Մամքանա սնուցածս, գնեց/ի զՔրտիս այգիս եւ ետու /ի ս(ուր)բ կաթողիկես վ(աս)ն իմ /հոգոյս: Առաջնորդ/ ով լինի ս(ուր)բ եկեղէցոյս /պարտի ինձ տարին Բ աւ/ր ժամ: Որ խափանէ՝ ի/մ մեղացս տեր ե առաջ/ի ա(ստուծո)յ: Ամէն»: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Խաչգունդը Քրտի այգին նվիրել է վանքին իր հոգու փրկության համար ու ստացել պատարագ: Այս վիմագրի եզակիությունն այն է, որ նվիրատուն հայ քաղկեդոնիկ է եղել, որից հետևում է, որ Վրաց եկեղեցում ևս եղել է մեղքերի թողության գնման երևույթը ու հավանաբար այդ երևույթը բնորոշ է ուղղափառ աշխարհին առհասարակ:

Վիմագրերից զատ՝ մեզ հասել են բազմաթիվ հիշատակարաններ, որտեղ ևս նվիրատուները հոգու փրկության հույսով հայցել են մեղքերի

թողություն՝ կատարելով նվիրատվություններ, որպես կանոն, ստանալով դրա դիմաց պատարագներ, քանի որ միայն պատարագի ժամանակ է հոգևորականը իրավասու իրականացնելու իր մեղսաքավիչ գործառույթը:

Մեղքերի թողության համար մեր եկեղեցուն դիմել են անգամ օտարազգիները՝ մահմեդականները: 16-րդ դարի կեսերին Սասունում տարածված է եղել մի ավանդություն, ըստ որի, բռնակալ քուրդ իշխանը, Դավթի գերեզմանից հանած և սեփականած խաչից պատուհասվելով, ծածկվել է անբուժելի վերքերով և մեռել թշվառության մեջ, իսկ նրա եղբայրը՝ Սասունի տիրակալը, քավելու համար եղբոր մեղքերը, խաչը դրել է հայկական եկեղեցում և վերջինիս մշտական վճար սահմանել՝ խաչի առաջ ձեթի կանթեղը մշտապես վառ պահելու համար:

Ինչպես վերը նշեցինք, հայ քաղկեդոնիկ հավատացյալ Խաչգունդի դեպքում նույնպես հանդիպում ենք մեղքերի թողության դիմաց տրվող նվիրատվության երևույթին: Կարելի է ենթադրել, որ վրացադավան Խաչգունդը չէր կարող քաղկեդոնիկ եկեղեցու դավանանքին հակասող որևէ քայլ կատարեր: Հետևաբար՝ այդ երևույթը կարծես թե ուներ համաքրիստոնեական բնույթ: Համաքրիստոնեական բնույթի մասին խոսելիս, անշուշտ, անհնար է անտեսել Հռոմեակաթոլիկ եկեղեցին, որը, ըստ էության, քրիստոնեական աշխարհի խոշորագույն եկեղեցին է: 11-րդ դարից սկսած և հատկապես 12-14-րդ դարերում առաջ է գալիս «Indulgentia»-ի երևույթը, որն իրենից ենթադրում էր մեղքերի խոստովանություն, Աստծո գոհացում՝ կամավոր, բարի գործերով: Այդ կամավոր, բարի գործերը ոչ միայն հոգևորին էր վերաբերում, այլ նաև նյութականին: Դրանք ուղեկցվում էին «փրկագնով», որն էլ մարդուն ապահովում էր մեղքերի թողություն ու հոգու փրկություն: Այդ փրկագինը գրեթե միշտ նյութական բնույթ էր կրում, որի դիմաց կաթոլիկ եկեղեցին տալիս էր թողության թուղթ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ հիմք ընդունելով ատենախոսության վերոգրյալ աղբյուրները, հետազոտության մեթոդները, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Պատարագի մեղսաքավիչ գործառույթը պատճառ է հանդիսացել, որ հավատացյալները պատարագ պատվիրելու միջոցով հետմահու կյանքում դրախտ ընկնելու հույսեր փայփայեն:
2. Պատարագ պատվիրելը կապված է եղել նաև նախաքրիստոնեական հավատալիքների ու պաշտամունքի հետ, և պատարագ պատվիրելու ու նախնիների պաշտամունքի միջև կա անմիջական կապ:
3. Պատարագ պատվիրելու հիմնական նպատակը հոգու փրկությունն էր, ուստի՝ մարդիկ չէին խնայում ոչինչ՝ նվիրելով եկեղեցիներին ու վանքերին

բազմաթիվ նվիրատվություններ (անշարժ և շարժական գույք՝ մասնավորապես ձեռագրեր), կառուցում եկեղեցիներ և այլն:
4. Այդ բոլոր նվիրատվությունների դիմաց նվիրառու հոգևորականությունը պարտավորվում էր երբեմն նույնիսկ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը պատարագել ու աղոթել նվիրատուների համար:
5. Հայերը հատկապես հյուսիսային Հայաստանում հիշյալ ժամանակներից մի տևական շրջան հարևան Վրաստանի ուղղափառ եկեղեցու ազդեցությամբ պատարագ են մատուցել նաև ողջերի համար, ինչը շարունակվում է նաև ներկայումս:
6. Պատարագներ ստացել են ոչ միայն նիրատվությունների դիմաց, այլ նաև շինարարական գործունեության համար:
7. Սահմանված պատարագներն ունեցել են որոշակի, սակայն ոչ կայուն գին:
8. Մեծ Հայքի յուրաքանչյուր տարածաշրջան, երբեմն նույնիսկ յուրաքանչյուր վանք ունեցել է իր կողմից սահմանված գինը:
9. Այդ գինը պայմանավորված է եղել, թե որ տոնի ժամանակ է հավատացյալը պատվիրել պատարագել իր համար: Ըստ այդմ էլ՝ նույն վանքի ներսում եղել են տոներ, մասնավորապես տաղավար տոները, կամ այն սրբերի տոները, որոնց պաշտամունքը լայն տարածված էր տվյալ տարածքներում (օրինակ՝ Սբ. Սարգսի տոնը), որոնք արժեցել են ավելի թանկ, քան մյուս տոների ժամանակ մատուցվելիք պատարագների գները:
10. Անհամեմատ ավելի բարձր գին են ունեցել տվյալ վանքի ուխտի օրերին մատուցվելիք պատարագները:
11. Պատարագի գինը պայմանավորված է եղել նաև տվյալ վանքի մեծահռչակությամբ:
12. Մեծ Հայքի մյուս նահանգներում պատարագ պատվիրելու միջին գինը վերջնականապես հնարավոր կլինի որոշել միայն տարիներ հետո, երբ յուրաքանչյուր տարածաշրջանից գիտական շրջանառության մեջ դրված կլինեն բավարար քանակությամբ արձանագրություններ:
13. Պատարագ մատուցում էին հանգուցյալների հիշատակի համար:
14. Պատարագ կարելի էր մատուցել նաև ողջ երկրի բարգավաճման համար:
15. Պատարագ պատվիրում էին նաև Աստծո զայրույթը կամ Ցասման ժամը մեղմելու համար:
16. Շատ հաճախ պատարագի մատուցումը միջոց էր թշնամիների դեմ հաղթանակ տանելու համար:
17. Քիչ չեն այն դեպքերը, երբ նվիրատուները որևէ եկեղեցու կամ կրոնական համայնքի մաս կազմելը անվանում էին «միաբանել», և որոշ դեպքերում «միաբանել» եզրը զուտ «նվիրատու», վանքին օգտակար լինելու իմաստը ուներ:

18. Մի շարք սկզբնաղբյուրներից հստակ երևում է, որ տվյալ վանքի վանահայրը, ինչ-որ կերպ իրավական տեսք է տվել այդ գործընթացին՝ նվիրատուներին «եղբայր», «միաբան» գրելով, որը անուղղակիորեն հիշեցնում է «աշխարհիկ միաբանների» երևույթը կաթոլիկ եկեղեցում: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ «միաբանեցայ» բառը վիմագրերում ու հիշատակարաններում վաղագույնը հանդիպում ենք Մորո Զորո վանքի N 263 վիմագրում՝ թվագրված 1197-1213 թթ.: Այսինքն՝ այդ ժամանակ Բագրատունյաց թագավորությունը վաղուց գոյություն չուներ, Զաքարյանները թեև վերանվաճեցին Մեծ Հայքի զգալի հատվածը, բայց երկրի մի խոշոր մասը շարունակում էր մնալ մահմեդական տիրակալների իշխանության տակ: 12-15-րդ դարերում «միաբանեցայ» եզրով նվիրագրերը շատանում են: Սակայն միանշանակ չի կարելի պնդել, որ «միաբանել» բառը օգտագործում էին միայն պարոնտերերը, բայց քննված վիմագրերից ելնելով, կարելի է ենթադրել, այդ եզրույթի շատանալը վկայում է «պարոնտերության» ինստիտուտի՝ ավելի զարգացած փուլ թևակոխելու մասին, ու այս համատեքստում «միաբանվող»-ներին կարելի է համարել միջանկյալ մի փուլի ներկայացուցիչ՝ դեպի պարոնտերություն գնացող:

19. Մեղքերի արձակման համար հավատացյալները ենթարկվում էին ոչ միայն հոգևոր պատիժների՝ ծոմապահություն, հաղորդությունից զրկվել և այլն, այլ նաև նյութական:

20. Բոլոր նյութական «ներողությունները» պաշտոնապես կրել են կամավոր բնույթ: Սակայն այս հարցում ամեն ինչ չէ, որ միանշանակ է: Միայն հոգևոր դասը իրավունք ուներ Աստծու անունից ազատել մարդուն մեղքերից: Հետևաբար՝ կարելի է ենթադրել, որ այդ «կամավոր» նվիրատվությունները կատարվում էին հոգևորականների հուշելուց հետո, կամ էլ, «ըստ կանոնական սահմանի», թեպետ «Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ» -ի կանոններից մեկով արգելվում էր վարձ ուզելը մեղքերի թողության համար. ՈՒԶ (ՈՒԲ) ԺԸ. «Եւ քահանայք զապաշխարութիւն վաճառականութեամբ մի՛ իշխեսցեն տալ, այլ դաստիարակութեամբ հոգասցին խրատել իբրեւ զկարեկիցս, զի ապրեսցին եւ հաս մի՛ առցեն ի նոցանէ մաքսաւորաբար, ձրի առնեմք եւ ձրի տամք» (Մատթ. Ժ, 8): ՈՒԷ (ՈՒԳ) ԺԹ. «Եթէ ոք ի քահանայից յայտնեսցէ երբէք զբանն ապաշխարութեան ապաշխարողացն, նզովիւք լուծցի եւ ամէն իրօք ջնջեսցի ի քահանայական ժառանգութենէն»: Ենթադրելի է, որ մեղքերի թողության վաճառքի, հետևաբար նաև գնման երևույթ եղել է անգամ վաղ միջնադարում, որ կարիք է եղել հատուկ կանոններով այն արգելել:

21. Հայ առաքելական ու վրաց ուղղափառ եկեղեցու դեպքում նվիրատուների անունները, հետևաբար նաև նրանց կատարած կամավոր նվիրատվությունների փաստը արձանագրվում էր արձանագրությունների ու հիշատակարանների տեսքով, իսկ կաթոլիկ եկեղեցում՝ թողության թղթերի:

22. Մեր եկեղեցու դեպքում մեղքերի թողությունը տրվում էր պատարագ մատուցելու միջոցով, որի ժամանակ էլ տեղի էր ունենում մեր ու արևելյան եկեղեցիներին առավելապես բնորոշ ընդհանրական խոստովանության կարգը: Կաթոլիկ եկեղեցու պարագայում հավատացյալը մասնավոր խոստովանության կարգի միջոցով էր ստանում մեղքերի արձակում, իսկ մասնավոր խոստովանության կարգի դեպքում պատարագի անհրաժեշտություն չկար: Այդ է պատճառը, որ, որպես մեղքերի թողության առհավատչյա, կաթոլիկ եկեղեցին տալիս էր թողության թղթեր, ոչ թե արձանագրում էր այդ փաստը եկեղեցու պատերին:
23. Ե՛վ արևմուտքում, և՛ արևելքում մեղքերի թողության դիմաց նվիրատվությունները սկսվել են 11-րդ դարից, հաճախացել 13-14-րդ դարերում, իսկ արևմուտքում անհամեմատ նվազ կերպով շարունակվում է մինչ այժմ:
24. Ե՛վ կաթոլիկ եկեղեցում, և՛ Հայ առաքելական եկեղեցում մեղքերի թողության գինը հիմնականում եղել է հստակ սահմանված: Չնայած մեր եկեղեցու՝ առավել ուշ շրջանի հեղինակները, մասնավորապես Արշակ Տեր-Միքելյանը, հերքում է կամ տեղյակ չէ այդ փաստին:
25. Հայերենի «Ժամոց» (Ժամուց) բառը նշանակում է «Պատարագիչ քահանային տրվող դրամական նվեր»: Անշուշտ, այդ եզրույթի առկայությունը պատահական չէ, և այդ բառը ևս մեկ անգամ գալիս է հիմնավորելու վերոնշյալ տեսակետը:
26. Կարելի է եզրակացնել, որ մենք նույնպես ունեցել ենք կաթոլիկների պես մեղքերի կամավոր գնման երևույթը, ոչ ուսմունքի մակարդակի հասցված, ինչպես կաթոլիկների մոտ, բայց և այնպես ոչ իսպառ բացակայող, ինչը որ կա ներկայումս:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ


1. Հ. Հակոբյան, Եսայու «Ավետարանը» կանոնի՞կ, թե՞ պարականոն // Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, 4., Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 378-382:
2. Հ. Հակոբյան, Եկեղեցուն նվիրատվություն կատարելու ևս մի պատճառ//Հաբիտուս. Մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, I, Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն (25-27 հոկտեմբեր, 2010, միջազգային գիտաժողովի նյութեր), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 332-337:

3. Հ. Հակոբյան, «Աշխարհիկ միաբանների» ինստիտուտը միջնադարյան Հայաստանում, Բանբեր Երևանի համալսարանի, շարք 1, համար 2, (143), Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 19-28:
4. Հ. Հակոբյան, Պատարագների փոխհատուցման խնդիրը, Ակունք, թիվ 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 60-64:
5. Հ. Հակոբյան, Մեղքերի թողության երևույթի մի առանձնահատկություն միջնադարյան աղբյուրներում// Ակունք, թիվ 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 51-59:

HAKOBYAN HAYK

## SPECIAL FEATURES OF LITURGY BOOKING IN EPIGRAPHIC AND BIBLIOGRAPHIC SOURCES

### SUMMARY

The phenomenon of personal liturgy purchasing was widespread during the High Middle Ages. The interpretation of the problem of liturgy indemnification is very important in the research of economical aspects of the Middle Ages. The donators donated real estate and movable property, built churches etc. to get liturgies. But it often happened that the donator has donated a certain sum directly in return for several liturgies. Often the offering included simultaneously financial and real estate forms. Not rarely getting a divine service is named just "to buy a liturgy". Every region of Greater Armenia, sometimes even every monastery had prescribed price list for ordering a liturgy.

Expressions like "*miabanel*" ("to join the monastery community"), "*miabanecay*", "*miaban egha*" ("I joined" or "I became a member of monastery community") often occur in epigraphic texts and manuscripts. Comparative study of those sources led to the following conclusions concerning this item:

a. in some cases the notion of "*miabanel*" (to join) expresses meaning of presenting anything to a monastery, to be useful for it,
b. it is obvious from some sources that probably the head-priest of the monastery in some way gave a legitimate status to the process of presenting, while presenters acquired the status of a "brother" or of a monk ("*miaban*"), which slightly reminds the institute of "worldly monks" of the Catholic Church.

In 12-15$^{th}$ centuries gift-inscriptions containing the term "*miabanecay*" become even more frequent. It is important to note that the word is not used exclusively by "*paronters*" (clergymen-feudals) but by ordinary people as well. Nevertheless, the examined sources witness that the institute of "*paronters*" in that period underwent evolution to a more complicated level and in this sense "*miaban*" may be considered as a representative of a medium stage leading to the status of a *"paronter"*.

The booked liturgies were often connected with the indulgence of sins. Remittal is a continuation of repentance, which is one of the seven sacraments of the Armenian Apostolic Church. For the remission of sins of believers not only concerned

spiritual punishment – abstinence, deprivation of the Eucharist, etc. – but also implied material penalty, and there are some parallels with other confessions concerning this item: People who got remission of sins make any offering (movable property or real estate), in return the official who released the sinner (a clergyman, a servant, a monk) was obliged to serve for him a divine service or a liturgy. This phenomenon was even canonized in some monasteries. Booking of a liturgy was also a means for remission of sins during the lifetime. In this context a curious explanation exists in the doctrine of the church concerning remittal and afterlife. According to that doctrine, the dead have no opportunity to repent and thus get indulgence. They live corresponding their deeds either in the eternal blissfulness or in eternal tortures. Consequently, they cannot repent, because the condition of blissfulness and torture consume all their attention. The teaching of the church thus confirms that the dead mostly even do not remember their earthly life. Only the living can pray for them to milden their state. Probably that is the reason why there are multiple inscriptions in which living people make donations trying to unburden themlelves and thier dead relatives. In this way liturgies served for living people were quite legal and did not controvene the teaching of the church.

All the material "apologies" officially were brought voluntarily.

1. In the case of the Armenian Apostolic and the Georgian Orthodox Church, the names of the donators, as well as the fact of their volunteer offerings were recorded in the form of epigraphic inscriptions and bibliographic data, as in the Roman Catholic Church - in the form of indulgences.
2. In the case of Armenian Apostolic Church, remission of sins occurred in the form of a special liturgy, during which the communal confession took place, which is basically inherent in Western and Eastern churches, as well.
3. Both in the West and in the East in response to the remission of sins donations began to be offered with 11$^{th}$ century, their number increased in 12$^{th}$-13$^{th}$ centuries, and in the West in considerably less extent they exist until our days.
4. In both Armenian Apostolic and Catholic Churches, the price of the remission of sins was exactly established.
5. It may be concluded that in the Armenian Apostolic church existed the institute of volutarily buing of indulgence like in the Catholic church, though it had not reached the dogma, as among catholics, nevertheless it did not miss absolutely as it is in our days.

АКОПЯН АЙК ЕРДЖАНИКОВИЧ

## ОСОБЕННОСТИ ЗАКАЗА ЛИТУРГИИ В ЭПИГРАФИЧЕСКИХ И БИБЛИОГРАФИЧЕСКИХ ИСТОЧНИКАХ

### РЕЗЮМЕ

В период развитого средневековья было распространено явление покупки литургии. Освещение проблемы возмещения литургий имеет большое значение для исследования экономики средневековья. Чтобы церковнослужители отслужили целевую (личную) литургию, дарители делали много пожертвований в виде недвижимой и движимой собственности, строили церкви и др. Однако известно немало случаев, когда даритель просто дарил

некую сумму денег и взамен получал определенное количество литургий. Часто пожертвование было одновременно как денежным, так и в виде недвижимости: Нередко получение особой литургии называлось просто “купить литургию”. Каждый регион Великой Армении, а иногда даже каждый монастырь, имел конкретно установленные тарифы на заказ литургии.

В эпиграфических и библиографических источниках много раз встречаются такие выражения, как “присоединиться”, “стать членом братии”. Сравнительное изучение источников в связи с данным явлением привело к следующим выводам:

а. В некоторых случаях данные выражения имели смысл “присоединения”, и были связаны с дарением, будущностью дарителей полезными монастырю.

в. Из ряда источников становится очевидно, что настоятель монастыря неким образом придавал правовой статус происходяшему, записывая дарителей в “братья”, в “монахи”. Эти факты отдаленно напоминают институт “светских монахов” в католической церкви. В 12-15 вв. количество дарственных надписей, содержащих выражение “Стать членом братии” увеличивается. Надо сказать, что этот термин употребляли не только "паронтеры" (феодалы-церковники). Эпиграфический материал дает основание утверждать, что "паронтерство" в эту эпоху вступило в более развитую стадию, когда институт подобных "братьев" становится некой переходной ступенью к приобретению статуса "паронтерства".

Заказные литургии нередко были связаны с отпущением грехов. Отпущение грехов является естественным продолжением покаяния – одного из семи таинств Армянской Апостолькой церкви. Для отпущения грехов верующие подвергались не только духовным наказаниям – воздержанию, лишению евхаристии и т. д., но и материальным, и в этом плане существует ряд параллелей с другими конфессиями. За отпущение грехов получивший его делал определенное пожертвование в виде недживимой или движимой собственности, а на церковный праздник лицо, принявшее пожертвование (священник, служащий церкви, монах) обязано было в отместку послужить обедню или литургию для дарителя. Это явление в некоторых монастырях было даже урегулировано уставом. Заказ литургии был возможностью облегчения грехов также при жизни. В этом смысле интересные пояснения вводит учение церкви об отпущении грехов и загробной жизни. Согласно учению, покойные не могут в покаяться и тем самым загладить грехи в загробном существовании. Они находятся, соответственно деяниям, либо в вечном мблаженстве, либо в вечных муках. Следовательно, они не могут покаяться, поскольку состояние блаженства или муки занимает все их внимание. Согласно церкви, по той же причине они практически не вспоминают свою земную жизнь. Лишь живущие в этом мире способны молиться за них, таким образом облегчая их страдания. По всей вероятности, в этом причина того, что имеется много надписей , в которых живые люди с помощью даров пытаются облегчить груз как своих грехов, так и грехов своих покойных родственников. Следовательно, литургии, служимые для живых были законными и не противоречили учению церкви. Все материальные “извинения” официально несли добровольный характер.

1. В случае Армянской Апостолькой и Грузинской православной церкви имена дарителей, а так же факты их добровольных пожертвований фиксировались в виде эпиграфических и библиографических записей, а в Католической церкви – в виде индульгенции.
2. В случае Армянской Апостолькой церкви отпущение грехов имело вид особой литургии, во время которой происходит всеобщая исповедь, которая в основном присуща нам и восточным церквам.
3. И на Западе, и на Востоке пожертвования в ответ на отпущение грехов начали делаться с 11-ого в., их количество увеличилось в 13-14 вв., а на Западе в значительно меньшей степени продолжается до настоящего времени.
4. Как в Армянской Апостольской, так и в Католической церкви цена опущения грехов была конкретно установлена.
5. Можно заключить, что в Армянской Апостольской церкви так же, как в католической, явление добровольной покупки отпущения грехов существовало, правда, не на уровне учения, как у католиков, но и не отсутствовало вовсе, как в наше время.